ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԱՂԱԽԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Խորհրդային Հայաստանի անվանի պետական գործիչ Գրիգոր Աղախանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. 41 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՐԻԳՈՐ ԱՂԱԽԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդային Հայաստանի անվանի պետական գործիչ Գրիգոր Աշոտի Աղախանյանը ծնվել է 1904թ. հոկտեմբերի 10-ին Սուրմալուի գավառի Իգդիր գյուղաքաղաքում:

1929թ. ավարտել է Դոնի գյուղատնտեսության և մելիորացիայի ինստիտուտը:

1932թ. եղել է ՍՄԿԿ անդամ, 1940-1953թթ.՝ ՀՍՍՀ ջրային տնտեսության մինիստր, 1953թ.՝ ՀՍՍՀ ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի ԳՀԻ-ի տնօրեն:

Մասնակցել է Արտաշատի, Դալմայի, Ստորին Հրազդանի և այլ ջրանցքների, ջրամբարների նախագծման, կառուցման, ՀՍՍՀ ոռոգման նոր համակարգի իրականացման աշխատանքներին: Մեծ ներդրում է ունեցել Խորհրդային Հայաստանում ջրային տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման, նորերի ստեղծման, պահպանման գործում:

Զբաղվել է նաև Սևանա լճի ջրերի խնայելու նպատակով Արարատյան դաշտի ստորերկրյա ու տեղական ջրերի օգտագործման, ոռոգման ցանցի նախագծման, ՀՍՍՀ ջրային տնտեսության զարգացման պատմության և այլ հարցերով:

Գրիգոր Աղախանյանը եղել է Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ:

1957թ. նրան շնորհվել է ՀՍՍՀ վաստակավոր հոիգատորի կոչում: Պարգևատրվել է ՍՍՀՄ երեք շքանշանով:

Գրիգոր Աղախանյանը մահացել է 1986թ. Երևանում:

Խորհրդային Հայաստանի անվանի պետական գործիչ Գրիգոր Աղախանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.41 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Գ. Աղախանյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԻԳՈՐ ԱՂԱԽԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրիգոր Աղախանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԻԳՈՐ ԱՂԱԽԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրիգոր Աղախանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ